

ԿՈՄԻԿԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ ԶԱՄԻՍԻ «ՀԱՋՈՂԱԿ ՋԻՄՐ»
ՎԵՊՈԻՄ

Քինգսլի Ուիլյամ Ամիսը XX դարի անվանի անգլիացի վիպագիր է, բանաստեղծ, քննադատ և ուսուցիչ: Նրա գրչին են պատկանում ավելի քան 20 վեպ («Փոփոխությունը» /The Alternation (1976)/, «Ծեր սատանաները» /The Old Devils (1986)/, «Կենսագրի բեղերը» /The Biographer Moustache (1995)/, «Դժոխքի նոր քարտեզը» /The New Maps of Hell (1960)/, «Ռեդյարդ Քիպլինգը և նրա աշխարհը» /Rudyard Kipling and His World (1975)/, բանաստեղծությունների 6 հատոր, ինքնահուշագրություններ (memoirs), տարատեսակ կարճ պատմվածքներ, ռադիո-հեռուստատեսային հաղորդումներ, ինչպես նաև սոցաշխատություններ և գրական քննադատություններ: Համաձայն Ջաքարի Լիդերի¹ «Քինգսլի Ամիսի կյանքը» (2006 թ.) կենսագրական վեպի՝ Ք. Ամիսը XX դարի երկրորդ կեսի բրիտանական լավագույն երգիծաբան վիպագիրն է: Նրա գործերում շոշափվում են տարատեսակ և տարաբնույթ խնդիրներ, որոնք առնչվում են քաղաքականության, կրթության, լեզվի, ֆիլմերի, հեռուստատեսության, ռեստորանների, ակոհոլի և այլնի հետ: Երբ Ք.Ամիսը զուտ սիրողական մակարդակի գիտելիքներ ուներ այս կամ այն խնդրի կամ երևույթի վերաբերյալ, նրան օգնության էր հասնում սեփական բնատուր լրագրողական հոտառությունը:

Ծագումով բրիտանացի հայտնի փաստաբան և թատերգու Ջոն Մորթիմերը (1923 – 2009) բնութագրում էր Ք. Ամիսին այսպես «...XX դարի հանճարեղ կատակերգակ էր... քանի որ նրա վեպերը բավականին երկարաժամկետ տպավորություն են թողնում ընթերցողի վրա և հիանալի վիպագիր է»:² Նրա գրքերը երկարաժամկետ և դաստիարակչական ազդեցություն են թողնում ընթերցողի վրա: Նա ներշնչված էր իր ժամանակաշրջանի ոգով և ձգտում էր իր աշխատություններով լուսաբանել, մեկնաբանել և դրանով իսկ լուծում գտնել այդ ժամանակի սոցիալական խնդիրներին: Դրա համար նրա աչքից չէր կարող վրիպել համալսարաններում առկա խնդիրները, որոնք ծագում են դասախոս -

¹ Leader Z. "The Life of Kingsley Amis", New York: Random House, 2006. pp. 1008, pp. 57

դասախոս, դասախոս - ուսանող, դասախոս - ուսանող - ծնող, վերադաս - ստորադաս փոխհարաբերություններից: Իր «Հաջողակ Ջիմը» /1954 թ./ վեպում նա կարողացել է շոշափել վերը քվարկված հարաբերությունները և դրանցից բխող խնդիրները: Վեպի վերնագիրը բխում է անգլիական երաժշտական սրահներում բավականին տարածված երգից, որը երգում են գինեմուկները:

“Oh, Lucky Jim

Oh, հաջողակ Ջիմ,

How I Envy Him...”

Որքան եմ ես նրան նախանձում...

Ըստ Դ.Լոդջի «Համալսարանական վեպ» ժանրի առաջին տեսաբանի «Հաջողակ Ջիմը» առաջին բրիտանական կամպուսային վեպերից է (campus novel): Այս վեպի առանցքային հերոսը գավառական համալսարանի դասախոս է: Ք Ամիսին հաջողվել է առաջին անգամ գավառական համալսարանի նեղ և անգույն աշխարհից քամել այսքան երգիծական, ծիծաղաշարժ պատմողական նյութ: Այս վեպի գաղափարը հղացավ այն ժամանակ, երբ Ամիսը այցելեց իր ընկերոջը՝ Ֆիլիպ Լարկինին 1948 թվականին Լեյսեսթերի համալսարանին կից քոլեջում, որտեղ Լարկինը գրադանավար էր: Բայց գոյություն ունի նաև այն կարծիքը, որ Ք.Ամիսը այս Լեյսեսթերի համալսարանի մասին տեղեկությունը տարածել է, որպեսզի վեպում արտացոլված համալսարանի նախատիպ չդիտվի հանկարծ Սվոնսիի (Swansea) համալսարանին կից քոլեջը, որտեղ անծամբ դասավանդել էր 1949-1961 թվականներին: Ամեն դեպքում «Հաջողակ Ջիմը» այնպիսի մի գործ էր, որը հիմք դրեց «Համալսարանական վեպ» ժանրին պատկանող ստեղծագործությունների լույս աշխարհ գալուն, մինչդեռ նախքան այս գրքի հայտնվելը, «համալսարանական վեպ» ժանրը համարվում էր զուտ ամերիկյան գրականությանը բնորոշ երևույթ: Նույնիսկ այնպիսի համաշխարհային մեծությունը, ինչպիսին Դեյվիդ Լոդջն է, խոստովանում է, որ թե՛ սեփական, թե՛ մի շարք այլ հայտնի գրողների (Մալքոլմ Բրադբուրի, Ջովարդ Ջաքոբսոն, Անդրյու Դեյվիս և այլն) վեպերը Ք.Ամիսի ստեղծագործության շարունակողներն են:

«Հաջողակ Ջիմը» պարունակում է Օ.Անցիֆերովայի հոդվածում նշված մի շարք ժանրային յուրատիպ գծեր³:

Առաջին հերթին համալսարանական վեպ ժանրին պատկանող վեպում համալսարանի նկարագրությունը ունի հույժ կարևորություն: «Հաջողակ Ջիմը» վեպի հենց սկզբում տրվում է տեղեկություն այն համալսարանի մասին, որտեղ

² Lodge D. Introduction // K.Amis “Lucky Jim” Penguin books, USA, New York 2002, p. i

³ Анциферова О., „Университетский роман: жизнь и законы жанра”//„Вопросы литературы”, Зарубежная литература, июль-август 2008, #4, стр. 277

աշխատում է Ջիմը: Համալսարանի մարգագետինները անխնամ են, իսկ «խեղանդամ» երկաթգիծն ու գերեզմանատան անմիջական հարևանությունը տխուր, ճնշող տրամադրության ակնհայտ պատճառը կարող են լինել: Գերեզմանատան հարևանությունն ակնհայտ կերպով մոռացության, գորշության, անկենդանության ստվեր է գցում համալսարանի վրա: Պարզ է, որ նման հարևանությունն անհնար կդարձնի աշխույժ ու բեղուն ուսումնական մթնոլորտի ստեղծումը: Համալսարանի նկարագրությունն օգնում է հասկանալ վեպի հերոսների հոգեկան վիճակը, վերջինից բխող միջանձնային հարաբերությունները, վեպի հետագա ընթացքը:

Երկրորդ կարևոր հատկանիշը հակադրվող զույգերի առկայությունն է: Այլ կերպ ասած, վեպի հերոսները հակադրվում են իրար իրենց արտաքին տեսքով և բնավորությամբ: Այս մեթոդը դարձնում է վեպն ավելի աշխույժ ու դինամիկ:

Երրորդ կարևոր հատկանիշը որևէ հավաքույթի կազմակերպումն է: Տվյալ վեպում նկարագրվում է համալսարանական ամենամյա պարահանդեսը, որի միտքը այն է, որ համախմբի վեպի բոլոր հերոսներին, հասցնի կուլմինացիոն կետին բոլոր տարածայնությունները և ճանապարհի հարթի դրանց լուծման համար: Այս գրական հնարքի պարահանդեսի առաջին գործածումները կարելի է գտնել դեռ XVIII դարի գրականության մեջ, իսկ ներկայումս այս գաղափարը լայնորեն օգտագործվում է ժամանակակից գրականության մեջ նաև այլ ժանրերին պատկանող վեպերում բազմաթիվ հեղինակների կողմից: Հերման Հեսսեի «Տափաստանային գայլը», Միխայիլ Բուլգակովի «Վարպետը և Սարգարիտան», Ջ.Ֆաուլզի «Մոզը»:

Վեպում Զ.Ամիսի ստեղծած գլխավոր հերոսի կերպարը՝ Ջիմ Դիքսոնը, իր ժամանակաշրջանի տիպիկ ներկայացուցիչ է: Վերջինս քաջ գիտակցում է, որ հաջողության հասնելու գրավականը տքնաջան աշխատանքն է, ինքնազարգացումը, ինքնադաստիարակումը և աշխատանքի նկատմամբ լուրջ ու պատասխանատու վերաբերմունքի դրսևորումը: Բայց միևնույն ժամանակ նա չի կարողանում ստիպել իրեն ջանք գործադրել բաղձալի երջանկությանն հասնելու համար:

“Հաջողակ Ջիմը” առաջին անգամ տպագրվել է Վիկտոր Գոլանցի կողմից 1954թ. հունվարին: Համարվում է, որ այս վեպը բեկումնային ազդեցություն է թողել մի ամբողջ սերնդի վրա: Քինգսլի Ամիսը, փայլուն կերպով ներկայացնելով անգլիական ակադեմիական կյանքը, սուր հունորով քննադատում է կարծես անգլիական ապրելաոճը: Քինգսլի Ամիսը մի նոր ժիծադկուտ և ծիծաղաշարժ ոգի ներշնչեց Անգլիայի հետպատերազմյան գեղարվեստական

գրականությանը: "Հաջողակ Ջիմը" իրոք որ դասական կատակերգային կամ-պոսային նովել է (campus novel) և մի այնպիսի մեկը, որն արտահայտում էր 1950 -ականներին չափահաս մարդկանց տրամադրվածությունը:

Այդ վեպի կոմիկական բաղադրիչը բխում է երկու աղբյուրից՝ իրավիճակից և ոճից: Սակայն կա հետևյալ տարբերությունը. իրավիճակից բխող կատակերգությունը անբաժանելիորեն կապված է ոճի հետ, մինչդեռ ոճական կատակերգությունը պարտադիր կերպով չի կապվում իրավիճակի հետ: Բայց, այնուամենայնիվ, երկուսն էլ ակնհայտորեն բխում են հեղինակի ժամանակի անընդհատ զգացողությունից, վեպի ընթացքն ու զարգացումը կառավարելու ունակությունից, կատակերգության բուն էությունը կազմող զարմանքի և տրամաբանության զուգադրման ստեղծումից: Իրավիճակի կատակերգության օրինակներից է անկողնու, սեղանի և գորգի այրումը պրոֆեսոր Վելչի տանը, երբ Ջիմը, ուղղակի գիտակցությունը կորցնելու աստիճան հարբած վիճակում, քնել էր՝ ծխախոտը բերանին: Իրավիճակի կատակերգության ևս մի օրինակ կարող է ծառայել հետևյալ դրվագը, երբ Ջիմը համալսարանական պարահանդեսից հետո "գողանում է" Բարբլինների պատվիրած տաքսին: Սա թերևս կարող է դիտվել նաև որպես չարաճճիություն, քանի որ այդ «գողությունը» ուղղակի «համեմեց» երեկոն և փախուստը Քրիստինի հետ, չէ որ Ջիմը իր համար էլ էր տաքսի պատվիրել, որը պիտի հասներ մի քանի րոպեից: Եվ Ջիմը, ինչ-որ չարախնդ կատակ խաղալով, որսաց այդ տաքսին և հետ ուղարկեց: Այդպիսով՝ Բարբլիններին ընդհանրապես թողնելով առանց փոխադրման միջոցի: Այսպիսի դրվագները բազմաթիվ են այս վեպում. Ջիմի ծայրի կեղծումը, որպեսզի տիկին Վելչը նրան չճանաչի հեռախոսով, ծայրահեղ հարբած վիճակում դասախոսություն կարդալը և այլն: Այս բոլոր թվարկված դրվագներում ակնհայտ կերպով կոպտորեն խախտվում են քաղաքակրթության կանոնները և նկատվում է ֆարսի տարրերի առկայություն: Այսպիսով, կապ է ստեղծվում բրիտանական կատակերգության սովորույթների հետ, որոնք պահպանվել էին Վոդհաուզի, Դիքենսի, Ֆիլդինգի ստեղծագործություններում, և որոնք ակունքները գտնվում են ռեստավրացիայի⁴ և եղիսաբեթյան կատակերգության ժամանակաշրջանում:

Զ.Ամիսի ստեղծած կատակերգությունը ավելի յուրօրինակ էր և նոր խոսք էր անգլիական գրականության մեջ: Ոճը բավականին հստակ է և պարզ, բայց ունի հատկանշական էլեգանտություն: Այդ ոճը ունի ակադեմիական հիմք, բայց զուրկ է դասակարգային տարրերից: Այսինքն, խոսքը գնում է կրթված և

⁴ Homby A.B. Oxford. Advanced Learners Dictionary, V edition, OUP 2000, p.1001

գարգացած մարդկանց մասին, բայց չի քննարկվում նրանց դասակարգային պատկանելիությունը: Վեպի հեղինակն օգտագործում է հարուստ բառապաշար, սակայն խուսափում է ընդունված հումորիստական գեղարվեստական միջոցներից՝ կատակ-ասույթներից (jocular periphrases), հերոսին ծաղրող գրական ակնարկներից և այլն: Ավելի շուտ Զ.Ամիսն առատորեն օգտագործում է հիմնականում երկու տիպի ոճական հնարներ փոխաբերություն և կրկնություն: Այլ կերպ ասած Զ.Ամիսի գրելու ոճը բխում էր այն «պարզ լեզվային» փիլիսոփայությունից, որը գերակշռող էր Օքսֆորդում իր ուսանողության տարիներին: Այդ ոճը շարունականաբար փոփոխվում ու փորձության է ենթարկվում սեփական ազնվության հետևանքով, բերում է թարմություն և նորարարություն՝ առօրյա կյանքը երգիծական տեսանկյունից դիտարկելիս:

“Dixon had read, or begun to read, dozens like it, but his own seemed worse than most in its air of being convinced of its own usefulness and insignificance. In considering this strangely neglected topic, - it began, This what neglected topic? This strangely what topic? This strangely neglected what?”⁵ (թարգմանությունը մերն է)

Դիքսոնը կարդացել կամ փորձել է կարդալ բազում հոդվածներ, բայց իր սեփական աշխատանքն ավելի վատն էր թվում, քան մյուսներիներ, քանի որ նա համոզված էր, որ իր աշխատանքը բացարձակ անպետք էր և ոչ կարևոր:

«Վերունենում այս տառօրհնակ կեղառվ անտեսված թեման...»

— հոդվածը սկսվում էր այս բառերով:

Այս որ՞ քիչ ուսումնասիրված թեման: Այս տառօրհնակ որ՞ թեման: Այս տառօրհնակ կեղառվ քիչ ուսումնասիրված հնչո՞ղ: Երբ նա մտածում էր այս ամենի մասին...

Ընդգծված հատվածներն արտացոլում են կրկնություն ոճական հնարը: Ակնհայտորեն երևում է, որ այստեղ գործ ունենք կաղապարային կրկնության հետ: Կրկնվող հարցադրումն օգնում է բացահայտել Ջիմի աշխատության անիմաստությունը: Կրկնության միջոցով հեղինակն առավել սուր կերպով է ընդգծում այն փաստը, որ Ջիմ Դիքսոնի հոդվածը խիստ ձևական բնույթ է կրում, և Ջիմն ինքն էլ քաջ գիտակցում է, որ իր հոդվածն բացարձակ անպետք դատարկաբանություն է:

He caught sight of his own face in the wall-mirror and was surprised to see that it wore an expression of eager friendliness.

Պատին ամրացված հայելու մեջ նա հանկարծ տեսավ իր դեմքը և զարմանքով նկատեց, որ այն կրում է ամիմընդ ընկեռասիրության դրոշմը:

⁵ K. Amis «Lucky Jim» Penguin Books, USA, 2002, p 15.

Մեջբերման մեջ ընդգծված բառակապակցությունը փոխաբերություն է, որի միջոցով ընթերցողին բավականին պատկերավոր կերպով ներկայացվում է Ջիմի թե արտաքին տեսքն, թե հոգեվիճակը: Ջիմն իրականում գրեթե ատում է իր ղեկավարին: Բայց քանի որ Ջիմը ապրում է շատ վատ պայմաններում, ապա Ուելչերի հարուստ ու հարմարավետ տանը երեկոն անցկացնելը և համեղ թեյն ու հյուրասիրությունը դրդում են Ջիմին կեղծարարության: Եվ նա ինքն է զարմանում, երբ հայելու մեջ տեսնում է իր՝ շինժու, կեղծ ընկերասիրություն արտահայտող դեմքը:

Ջիմ Պիքսոնը խիստ կախում ունի պրոֆեսոր Վելչից, որը ղեկավարում է համալսարանի այն բաժինը, որտեղ դասավանդում և փորձաշրջան է անցնում Ջիմը: Սվենսոնը և Լուրին էլ իրենց հերթին կախման մեջ են համալսարանի տնօրենից և Խորիրդից, որոնց որչունը կարող է բախտորոշ լինել նրանց կյանքի, ընտանեկան հարաբերությունների և անձնական կարիերայի զարգացման հարցերում: Այս կախումը ավագ աշխատակցից կամ տնօրինությունից ևս ցավոտ խնդիր է համալսարանական կյանքում դասախոսների համար: Պրոֆեսոր Վելչի կերպարի միջոցով Ամիսը հիմնալի կերպով նկարագրում է 1950-ական թվականների համալսարանական կյանքը ղեկավարող անձանց, որոնք սովորաբար բացարձակ ցրված, էքսցենտրիկ և գործնական ուղորտում ոչ կոմպետենտ անձակազմ են: Համալսարանն էլ իր հերթին, թվում է, թե ոչ միայն հանդուրժում, այլ նաև «բուժում» է այդպիսի ղեկավարների:

Ք.Ամիսը այս վեպում բավականին մակերեսայնորեն է անդրադարձել այնպիսի խնդիրների, ինչպիսիք են համալսարանական քաղաքականությունը և տարբեր սոցիալական շարժումները արգելված սեռական հարաբերությունները ուսանողների և դասախոսների միջև: Այս խնդիրները կարծարծվեն «Հաջողակ Ջիմը»-ին հաջորդող վեպերում՝ տվյալ գրական ժանրի զարգացմանը զուգահեռ: Ք.Ամիսի վեպում թեև շատ լակոնիկ, բայց սուր կերպով շեշտվում են մտավոր մրցակցությունը, բանսարկությունները և խարդավանքները, որոնք դասախոսները նյութում են միմյանց դեմ: Հատուկ ուշադրության է արժանի «ինտելեկտուալ սեփականությանը»⁶ վերաբերող ցավագին հարցը: Այլ բառերով ասած, գրագողության խնդիրը: Ինչպես նշում է ամերիկյան բարձրագույն դպրոցի հայտնի գործիչ Ալվին Կերմանը, որը հիմնականում դասավանդում էր Պրիստոնյան և Կոլումբիական համալսարաններում, մեծ ուշադրու-

⁶ Анцыферова О., „Университетский роман: жизнь и законы жанра“//„Вопросы литературы“, Зарубежная литература, июль-август 2008, #4, стр. 277

թյուն է անհրաժեշտ դարձնել այն փաստին, որ ավելի ու ավելի հաճախ է ժխտվում տեքստային յուրօրինակությունը, իսկ միջտեքստային մտածելակերպի, լեզվի և խոսքի գաղափարը հարմար հիմք է հանդիսանում գրագողության տարածման համար:⁷ 1950-ական թվականներին եթե որևէ մեկին մեղադրանք էր ներկայացվում գրագողության մեջ, ապա անհապաղ նրան հեռացնում էին աշխատանքից և դա պատվազրկող և ստորացուցիչ մի դրոշմ էր տվյալ դասախոսի կամ գիտնականի համար: Իսկ ներկայումս ավելի հաճախ են բացահայտվում գրագողության դեպքեր և գրեթե մնում անպատիժ: Օրինակ, Զ.Ամիսի վեպում դասախոս Ջոնսը, ուղղակի թարգմանելով Ջիմ Դիքսոնի գրած հոդվածը, ներկայացնում է այն որպես իր սեփական ուժեղով կատարված աշխատանք՝ դրանով շահելով բաժնի ղեկավարի՝ պրոֆեսոր Վելչի ուշադրությունը, և ամրապնդելով իր դիրքը համալսարանում: Իսկ խեղճ Դիքսոնը չի կարողանում ոչ մի կերպ վերականգնել արդարությունը և ևս մի պատճառով կորցնում պրոֆեսոր Վելչի վստահությունը, քանի որ ստացվում է, որ նա ոչ մի գիտական աշխատանք չի կատարել:

Այստեղ կարծում եմ արժանի է հիշատակել այն հետաքրքիր փաստը, որ գրագողության թեմային հիմնավոր կերպով անդրադարձել է Ջեյմս Չայնսը իր «Ֆրատարակի՛ր և մեռի՛ր» ժողովածուի «Բուների դասավորվածությունը» վիպակում: Վերջինիս համար հիմք է հանդիսացել Ս. Ռ. Ջեյմսի համանուն պատմվածքը, որը լույս է տեսել 1915թ.: Չայնսի վեպում չար կախարդի նման համալսարանի պրոֆեսոր Վիկտոր Կարսվելը անեծքներ է դնում այն ուսանողների վրա, ում հաճաքեղ մտահղացումները նա «գողանում» և սեփականաշնորհում է: Եվ հաճախ այդ ուսանողները մահանում են այդ անեծքների հետևանքով:

Գրագողության թեման արժարժվում է միջնադարից մինչև մեր օրերը: Այն ի հայտ է գալիս բոլոր բնագավառներում գիտական, գրական, քաղաքական, լրագրողական և այլն. Ամենավերջին աղմկահարույց դեպքերից են (1992-2012 թթ.) Ռուսաստանի Խեղելաքցիայի նախկին նախագահ Վլադիմիր Պուտինի, Խոզարիայի նախագահ Փալ Շմիթի և Ռումինիայի վարչապետ Վիկտոր Պրեմայի դեմ դատական գործերի հարուցումը, քսեղի նրանք ծնողարվում են գրագողության մեջ: Երանց ատենախոսություններում քափականին լայնածավալ համվածներ պարզապես արտագրված են այլ հեղինակներից առանց գրական աղբյուրի հիշատակման:

⁷ Eisman A. In Plato's Cave. New Haven, Ct.: Yale university press, 1999, page 193

ԶՆՆարկելով Զ Ամիսի վեպի պատմական և սոցիալական ակունքները, պետք է նշել, որ «Հաջողակ Ջիմը» կարծես ճանապարհի հարթեց այնպիսի գրական ուղղության համար, ինչպիսին էր «Բարկացած երիտասարդները» ("The Angry Young Men"): Այս ուղղությունը համախմբեց այն հեղինակներին և նրանց հերոսներին, որոնք ապստամբեցին և արտահայտեցին իրենց անոամածայնությունը և զագրանքը տիրող կարգերի հանդեպ: Այդ հեղինակներից էին Ջոն Օսթրոնը, Ալեն Սիլիթոն, Ջոն Բրեյնը, Զ Ամիսը, Այս գրողների կյանքի, կրթության և ստեղծագործական ոգու վրա մեծ ազդեցություն է թողել Եռուորդ Համաշխարհային պատերազմը, քանի որ նրանց բուն զարգացումը համընկել է 1940-ականներին: Ամիսի վեպում այս ազդեցությունը ուղղակիորեն արտահայտվում է մի քանի փաստերով՝ օրինակ՝ Դիքսոնի ուսանողներից Մրտչին նախկին ծառայող է, որը տանկային դիվիզիա է ղեկավարել Անգլիայում, իսկ ինքը՝ Դիքսոնը, իր բոլոր փաստաթղթերը դեռ չարունակում է պահել որ «Արքայական բանակային ուժեր»-ի թղթապանակի մեջ:

Երկրորդ Համաշխարհային պատերազմը մեծ ազդեցություն ունեցավ եկող սերնդի վրա: Եթե պատերազմից վերադարձած երիտասարդը առջևն այնքան էր «կոփված», որ սիրտ չուներ ինչ-որ ծեղքերումների հասնել, թե՛ անձնական, թե՛ կարիերայի հարցում, ապա հաջորդ սերունդները քաջ գիտակցեցին գիտության և կարիերայի կառուցման կարևորությունը՝ Նախկինում գիտությանը զբաղվում էին հիմնականում հարուստ մարդիկ, որոնք ունեին այլ ակամություններ (կալվածներից, սեփական գործարաններից, վարձով տրվող հողերից և անասուններից), քանի որ գիտությունը այնքան էլ վարձատրվող և փողաբեր չէր: Բացի դրանից, ուսումն էլ իր հերթին բանկ հաճույք էր, որը մատչելի չէր հասարակ ժողովրդին: Սակայն Երկրորդ Համաշխարհայինը իր հետևից բերեց մի շարք նոր օրենքներ (General Education Act, 1945), որոնք բացեցին ուսման դռները հասարակ ժողովրդի համար: Այս հանգամանքը մի կողմից նպաստեց ժողովրդի ընդհանուր կենսամակարդակի բարձրացմանը, բայց մյուս կողմից էլ անկման հանգեցրեց համալսարանական բարձրագույն կրթության և կուլտուրայի մակարդակը: Օրինակի համար համեմատենք պրոֆեսոր Վեյչի և Ջիմ Դիքսոնի հետաքրքրությունները և մտքերը՝ Դիքսոնը Վեյչը բացի իր դասավանդած առարկայից նաև շատ այլ հետաքրքրություններ ունի, նա համար գրական-երաժշտական երեկոներ է կազմակերպում իր տանը, ուսումն էլ հազվադեպ է կրթված և հաջողակ մարդիկ: Ի հակադրություն Վեյչի՝ Ջիմը հասարակ պլեբեյ է, որը նույնիսկ քաժակաճաշակի կրթություն էլ չունի: Այդ պատճառով այդքան դժվարությամբ գլուխ է խուլված, որը վերնադաս է «1450-1485 թվ.-ների նավաշինական միջոցների զարգացման տնտեսական պրոցեսները»:

ուղղակի խղճուկ և հիմար տպավորություն է թողնում: Սակայն ինքնակրթության միջոցով սեփական մասնագիտական մակարդակը բարձրացնելու փոխարեն Ղիքսոնը, հետպատերազմյան սերնդի իսկական ներկայացուցչի նման փորձում է վրեժխնդիր լինել ավելի բարձր ունևոր դասից՝ Վելչից և Մարգարեից, բայց միայն մտուլի պատկերացնելով, թե ինչպես է պրոֆեսոր Վելչին խոթում զուգարանակոնքի մեջ և ծեծում, իսկ Մարգարեի քիթը լցնում հուլունքներով: Սա մանկական մտածելակերպ է և ոչնչով նման չէ հասուն զարգացած մարդու մտածելակերպին:

Սակայն կատակերգության ամբողջ միտքն այն է, որ Ջիմը ոչ թե պիտի փոխվի, ինչպես ինքն է սկզբում ջանք թափում այդ անելու, այլ ուղղակի հրաժարվի ու ազատվի այն աշխատանքից և միջևավայրից, որի համար նա միշտ էլ օտարական կմնա: Ջիմը սիրահարվում է Քրիստինին՝ Բերթրանի ընկերուհուն: Քրիստինը Ջիմի նման դատարկազուլիսի մեկն է, որին նույնպես հետաքրքրում է միայն օրվա ապրուստը և զվարճանքը: Ջիմը փորձում է Քրիստինի հետ ավելի սերտ կապ հաստատել, բայց մի կողմից աշխատանքը կորցնելու փաստը, մյուս կողմից Մարգարեի նկատմամբ խղճահարությունը նրան թույլ չեն տալիս դա անել: Սակայն Ղիքսոնը կարծես ճիշտ ժամանակին հասկանում է իր սխալը, որը ինքնակործանարար հետևանք կարող էր ունենալ: Նա մի կողմ է նետում վախի և խղճահարության զգացողությունները, որն առաջին անգամ երևում է այն դրվագում, երբ նա դեմ է դուրս գալիս Բերթրանին, առանց երկնչելու ընդունում է Բերթրանի մարտահրավերը և մի լավ դաս տալիս այդ պարծենկոտին:

Ու անմիջապես Ջիմին սկսում է ժպտալ հաջողությունը թե՛ անձնական կյանքում և թե՛ կարիերայում: Նա ազատվում է իրեն տանջող, իր և իր ուսանողների ժամանակը անիմաստ վատնող աշխատանքից և միանգամից լավ աշխատանքային առաջարկ ստանում Քրիստինի քեռուց՝ Գոռ Ուրբ-Չարթից:

Քրիստինի քեռին Ղիքսոնի մեջ տեսնում է մի երիտասարդի, որն ուղղակի իր ճիշտ տեղը չի գտել, բայց կարող է սրտանց և լավ աշխատել, եթե գործը նրա սրտով լինի: Իսկ Բերթրանը, որը հավակնում էր այդ աշխատատեղին, քեռու սրտով չէր, քանի որ երկերեսամիության և շողոքորթության միջոցով էր ուզում տիրել այդ տեղին:

Նաև Ղիքսոնին է բաժին ընկնում Քրիստինը, քանի որ վերջինս հասկանում է, որ Ղիքսոնը իրոք սիրում է նրան և չի շահագործում Բերթրանդի նման:

Ղիքսոնը փրկվում է Մարգարեի որոգայթից, քանի որ մյուս կողմից էլ Մարգարեի նախկին սիրեկանը՝ Քեչփոուլը, բացում է Ղիքսոնի աչքերը: Ղիքսոնը տեսնում է, որ իրականում այդ կինը հիստերիկ կիսախելագար մոլագար է, որը

կխորտակի պարզապես իր կյանքը: Եվ երբ նա քաջություն է հավաքում, վերջապես (գլուխ 16-ում) բացարձակ հայտարարում է Մարգրեթին, թե ինչ է մտածում նրա մասին, Դիքսոնը միանգամից զգում է հիասքանչ մի թեթևություն և ազատվում է Մարգրեթի հանդեպ խղճահարության ճանկերից: Ջիմը թեև ուշացումով, բայց այնուամենայնիվ գիտակցում է, որ իր ինքնագոհ խղճահարությունը Մարգրեթի հանդեպ չի բխում սեփական սրտից, այլ ինչ-որ վախի հետևանք է: Եվ հետո, բնականաբար, այդ վախը հաղթահարելու համար է, որ նա արժանանում է պարգևի, այսինքն, Քրիստինի հետ լինելուն: Այլ կերպ ասած, Դիքսոնը օգտագործում է իր՝ երջանիկ և ազատ լինելու բնատուր իրավունքն ի հակադրություն Ֆ.Կաֆկայի «Փոխակերպումը» վեպի հերոսի՝ Գրեգոր Չամզայի: Եվ արդյունքում իր քաջության համար որպես պարգև նա ստանում է և՛ նոր աշխատանք, և՛ գեղեցիկ ընկերուհի:

Ք.Ամիսի «Ջաջողակ Ջիմը» առաջին վեպերից է, որ համապատասխանում է այն ժանրային չափանիշներին, որոնք հետագայում մշակվեցին և նկարագրվեցին Համալսարանական վեպ ժանրի ակնառու գրաքննադատների և տեսաբանների կողմից: Համալսարանական վեպ ժանրի գրաքննադատների կողմից Ք.Ամիսի վեպը դասվում է առաջին կամպուսային կոմիկական վեպերի շարքում: Նախ այն պատճառով, որ վեպում հանդիպում են բազում ծիծաղաշարժ իրավիճակների: Այնուհետև հողվածում քննարկված օրինակներից տեսնում ենք, որ հեղինակը կոմիկական երանգ է հաղորդում իր ստեղծագործությանը՝ վարպետորեն օգտագործելով փոխաբերություն և կրկնություն ոճական հնարները:

THE COMIC ELEMENTS IN K. AMIS'S "LUCKY JIM"

Kingsley Amis has written a marvelously funny novel describing the attempts of England's postwar generation to break from that country's traditional class structure. When it appeared in England, "*Lucky Jim*" provoked a heated controversy in which everyone took sides. It was Amis's first novel, and won the Somerset Maugham Award for fiction. According to a very famous writer and literary critic David Lodge "*Lucky Jim*" is a classic comic novel. In this novel with the help of irony and simile the author expresses English people's mood in 1950s. The comedy in the novel derives from two sources: situation and style. K. Amis put aside the traditional devices of humorous literary prose – jocular periphrases, mock-heroic literary allusions, urbane detachment, etc. Amis's new language style brought a bracing freshness to the satirical observation of everyday life. The university setting in the novel pictures greatly the stuffy provincial bourgeois world into which the main hero – Jim Dixon – is promoted and against whose values and codes he frantically rebels. The hero undergoes a great development and matures a lot and finally becomes brave enough to express his dissatisfaction not cowardly and inwardly but bravely speaks up and fights to protect all his human rights. K. Amis gave a happy ending to the novel because he was an optimist and really believed that true love and hard work can save anyone.